Կարգապահական գործ թիվ ԿԳ-26003

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ու Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ԿՈՉՈՒԲԱԵՎԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևին (արտոնագիր՝ թիվ 2606) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Աննա Երեմյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ)** հայտնել է, որ հանդիսանում է մեղադրյալ թիվ 59100223 քրեական վարույթով (դատական գործ թիվ ԵԴ1/0787/01/24):

Դիմողը հայտնել է, որ նշված քրեական վարույթի շրջանակներում փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը ներգրավվել է որպես իր պաշտպան, երկու անգամ այցելել է իրեն քրեակատարողական հիմնարկում, նաև հայտնել է, որ իր մոտ են գտնվել քրեական վարույթի բոլոր նյութերը:

Դիմողը նշել է, որ անհամաձայնության պատճառով հետագայում այլևս չի ցանկացել օգտվել փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի ծառայություններից և գրավոր հրաժարվել է նրա պաշտպանությունից:

Հետագայում, նշված քրեական գործով 29.12.2025 թվականին հրավիրված արտահերթ դատական նիստի ընթացքում Դիմողը պարզել է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը և «Կոնտրա Լեգեմ» փաստաբանական գրասենյակի փաստաբան Դավիթ Թովմասյանը

Թիվ ԿԳ-26003-2-Ա
06.05.2026թ.

միջնորդել են ներգրավվել գործով որպես Դիմողի հակառակորդ կողմի՝ գործով տուժողներ Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի ներկայացուցիչներ:

Դիմողի պնդմամբ, ինքը և իր պաշտպանը բացարկ են հայտնել վերջիններիս, սակայն դատարանը բավարարել է այն միայն փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի մասով, իսկ փաստաբան Դավիթ Թովմասյանի մասով մերժել է և ներգրավել նրան սույն գործով:

Դիմողի պնդմամբ, փաստաբան Դավիթ Թովմասյանը հանդիսանում է «Կոնտրա Լեգեմ» փաստաբանական գրասենյակի աշխատակից, ինչի կապակցությամբ ներկայացրել է «facebook» սոցիալական ցանցից հրապարակումներ, ուր վերջինս ներկայացել է որպես «Կոնտրա Լեգեմ» փաստաբանական գրասենյակի փաստաբան:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբաններ Ալեքսանդր Կոչուբաևին և Դավիթ Թովմասյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 24.03.2026 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 01.04.2026թ. ներկայացրած դիմումով, ըստ էության, պնդել է նախկինում արտահայտած իր դիրքորոշումները և ներկայացրել է ապացույցներ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին առաջարկվել է ներկայացնել բացատրություն իր վերաբերյալ ներկայացված դիմումի կապակցությամբ, սակայն Փաստաբանը որևէ բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 24.03.2026 թվականին Փաստաբանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.5 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 02.04.2026թ. ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ մեկ անգամ տեսակցել է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում գտնվող Աննա Երեմյանին: Ըստ Փաստաբանի՝ հանդիպման ընթացքում վերջինս հայտնել է, որ մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման մեջ, իսկ գործով տուժող է հանդիսանում Դավիթ Արզումանյանը:

Փաստաբանը հայտնել է, որ նշված հանգամանքների մասին տեղեկանալով և ճանաչելով գործով տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող Դավիթ Արզումանյանին՝ որոշել է չստանձնել Աննա Երեմյանի պաշտպանությունը և հետագայում չի ներգրավվել նաև որպես պաշտպան:

Ըստ Փաստաբանի՝ Դիմողի գործը գտնվել է նախաքննության փուլում, և իրեն գործի վերաբերյալ որևէ նյութ կամ տեղեկություն հասանելի չի եղել:

Փաստաբանը բացատրությանը կից ներկայացրել է ապացույցներ:

Կարգապահական վարույթի կողմերը Հանձնաժողովի նիստի տեղի և ժամանակի մասին ծանուցվել են պատշաճ կերպով, սակայն նիստին չեն ներկայացել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 09.02.2026 թվականի թիվ 87-Ա/ԿԳ-26003 որոշմամբ, Աննա Երեմյանի դիմումի հիման վրա, փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի նկատմամբ՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Սույն կարգապահական վարույթի նախապատրաստումն իրականացվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Գարիկ Հախնազարյանի կողմից (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 10.04.2026թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխում նշված 2-րդ և 4-րդ փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 10.04.2026թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել՝ 06.05.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում՝ ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Դիմող Աննա Երեմյանը հանդիսանում է մեղադրյալ թիվ 59100223 քրեական վարույթով (դատական գործ թիվ ԵԴ1/0787/01/24), իսկ նույն քրեական գործով Դավիթ Արզումանյանը և Սոֆյա Գևորգյանը հանդես են եկել Դիմողի շահերին հակադիր դատավարական շահ ունեցող անձանց կարգավիճակով:

2. Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը քրեակատարողական հիմնարկում տեսակցել է Դիմող Աննա Երեմյանին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև Փաստաբանի 02.04.2026թ. բացատրությամբ, որով վերջինս ընդունել է ՔԿՀ-ում Դիմողի հետ տեսակցության փաստը:*

3. Փաստաբանի 02.04.2026թ. բացատրության համաձայն՝ ՔԿՀ-ում տեղի ունեցած տեսակցության ընթացքում Դիմողը հայտնել է, որ մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման մեջ, իսկ գործով տուժող է հանդիսանում Դավիթ Արզումանյանը:

4. Փաստաբանի 02.04.2026թ. բացատրության համաձայն՝ Դիմողի կողմից հայտնած վերոնշյալ հանգամանքների մասին տեղեկանալով և Դավիթ Արզումանյանին ճանաչելու հանգամանքը հաշվի առնելով՝ Փաստաբանը որոշել է չստանձնել Աննա Երեմյանի պաշտպանությունը:

5. Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը ՔԿՀ-ում Դիմողի հետ տեսակցելուց հետո թիվ ԵԴ1/0787/01/24 քրեական գործով ստանձնել է Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, Փաստաբանի բացատրությամբ, ինչպես նաև գործում առկա դատավարական փաստաթղթերով:*

6. Գործի նյութերով չի հաստատվել, որ Դիմող Աննա Երեմյանը գրավոր համաձայնություն է տվել Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին՝ նույն քրեական գործով իր շահերին հակադիր անձանց՝ Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու վերաբերյալ:

7. Կարգապահական վարույթի ընթացքում ներկայացվել է ձայնագրության կրիչ, որի հետազոտմամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ դատական նիստի ընթացքում փաստաբան Դավիթ Թովմասյանը հայտնել է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևն իրեն հայտնել է, որ հետագայում կարող է բարձրացվել Ալեքսանդր Կոչուբաևին վարույթից հեռացնելու կամ նրա մասնակցությունը վիճարկելու հարցը:

8. Թիվ ԵԴ1/0787/01/24 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 29.12.2025թ. որոշմամբ բավարարվել է պաշտպան Արթուր Քալաշյանի միջնորդությունը և փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը հեռացվել է վարույթից՝ որպես տուժող Դավիթ Արզումանյանի լիազոր ներկայացուցիչ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 09.03.2026թ. որոշմամբ տուժող Դավիթ Արզումանյանի լիազոր ներկայացուցիչ Ալեքսանդր Կոչուբաևի հատուկ վերանայման բողոքը բավարարվել է, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 29.12.2025թ. որոշումը բեկանվել է և կայացվել է նոր դատական ակտ՝ պաշտպան Արթուր Քալաշյանի՝ Ալեքսանդր Կոչուբաևին վարույթից հեռացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի 02.04.2026թ. բացատրությամբ, կից ներկայացված ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 09.03.2026թ. որոշմամբ:*

5. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի 05.05.2026 թվականի թիվ ԿԳ/333-26 տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ է և փաստաբան է հանդիսանում 24.05.2019 թվականից, արտոնագիր՝ թիվ 2606:

Նույն տեղեկանքի համաձայն՝ 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում Փաստաբանն ունեցել է 3 կարգապահական տույժ: Տեղեկանքի հավելվածով արձանագրված է, որ 14.12.2023թ. թիվ ԿԳ-23028-2-Ա որոշմամբ Փաստաբանը ենթարկվել է «նկատողություն» և լրացուցիչ վերապատրաստման 4 ակադեմիական ժամ տույժերի, 14.12.2023թ. թիվ ԿԳ-23029-2-Ա որոշմամբ՝ «նկատողություն» տույժի, իսկ 29.01.2025թ. թիվ ԿԳ-24170-2-Ա որոշմամբ՝ «նկատողություն» և լրացուցիչ վերապատրաստման 4 ակադեմիական ժամ տույժերի: Հավելվածում հիմնական տույժերի մասով նշված է, որ դրանք մարված են, իսկ լրացուցիչ տույժերից երկուսի մասով՝ որ տույժը մարված չէ: Փաստաբանն իր նկատմամբ կիրառված վերոնշված կարգապահական տույժերը վիճարկում է դատական կարգով:

6. **<u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է առաջնորդվել առնվազն հետևյալ վարքագծի կանոններով. (...)*

5) ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ՝ (...)

դ. պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը. (...):

Կանոնագրքի 3.2.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա:* ***Փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:*** *Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն* ***վստահորդի գրավոր համաձայնության*** *պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական*

գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում...:

Կանոնագրքի 1.4 կետի 8-րդ պարբերության համաձայն՝ *վստահորդ է հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձ (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը. վստահորդը նաև հանդիսանում է պատվիրատու,*

Նույն կետի 9-րդ պարբերության համաձայն՝ *պատվիրատու է հանդիսանում վստահորդ չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ կնքել է պայմանագիր վստահորդի շահերը ներկայացնելու համար:*

Նույն կետի 10-րդ պարբերության համաձայն՝ *հակառակորդ կողմ է հանդիսանում փաստաբանի վստահորդի հետ վեճ ունեցող անձը, կամ փաստաբանի վստահորդի դատավարական հակառակ կողմը.*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով* ***դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից****, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից*:

Օրենքի այս պահանջը պարտադրում է նորմատիվ իրավական ակտը մեկնաբանել առնվազն տառացի նշանակությամբ:

Վերոնշյալ նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետով և Կանոնագրքի 3.2.2 ենթակետով սահմանված արգելքը վերաբերում է այն իրավիճակին, երբ փաստաբանը, նախկինում որևէ անձի հետ փաստաբանի օգնությանը դիմելու կապակցությամբ իրավական հարաբերություն ունենալուց հետո, ստանձնում է այդ անձի շահերին հակադիր անձի շահերը՝ առանց նախկին վստահորդի գրավոր համաձայնության:

Օրենքի վերոնշյալ կանոնը պահանջում է երկու պայմանից մեկի առկայություն, որպեսզի փաստաբանի վարքագիծի համարվի իրավաչափ՝ նախկին և ներկա վստահորդների շահերի միջև հակասության բացակայություն կամ նման հակասության դեպքում փաստաբանի նախկին վստահորդի գրավոր համաձայնություն իր հետ շահերի հակասություն ունեցող անձի շահերը տվյալ փաստաբանի ներկայացման վերաբերյալ:

Հանձնաժողովը կարևոր է համարում արձանագրել, որ Կանոնագրքի 1.4 կետի իմաստով վստահորդի կարգավիճակը պայմանավորված չէ բացառապես գրավոր պայմանագրի կնքմամբ, լիազորագրի առկայությամբ կամ դատավարական կարգավիճակի ձևակերպմամբ: **Կանոնագիրքը վստահորդ է համարում այն անձին, որը դիմել է փաստաբանի օգնությանը:** Հետևաբար, եթե անձը դիմել է փաստաբանի օգնությանը, իսկ փաստաբանը այդ դիմելու կապակցությամբ տվյալ անձի հետ ունեցել է մասնագիտական հաղորդակցություն, ապա նման հարաբերությունը Կանոնագրքի իմաստով ճանաչվում է որպես փաստաբան-վստահորդ հարաբերություն՝ անկախ նրանից, թե հետագայում կնքվել է

պայմանագիր, թե ոչ, կամ փաստաբանը ներգրավվել է տվյալ անձի դատավարական ներկայացուցիչ կամ պաշտպան, թե ոչ:

Այլ մեկնաբանությունը կհանգեցներ այնպիսի իրավիճակի, երբ փաստաբանը կարող էր միայն պայմանագիր չկնքելու կամ լիազորություն չձևակերպելու փաստական հանգամանքի հիմքով ազատվել շահերի հակասությունից զերծ մնալու պարտականությունից, թեև մինչ այդ ունեցել է մասնագիտական հաղորդակցություն իրավաբանական օգնություն հայցած անձի հետ: Նման մոտեցումը կհակասեր շահերի բախման արգելքի նպատակին, քանի որ Օրենքի և Կանոնագրքի նշված կարգավորումներն ուղղված են ոչ թե միայն ձևական պայմանագրային հարաբերությունների կարգավորմանը, այլ փաստաբանի մասնագիտական անկախության, բարեխղճության և վստահորդի շահերի առաջնահերթ պաշտպանության ապահովմանը:

Ուստի Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի կիրառման համար Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում պարզել հետևյալ հարցերը.

1. արդյո՞ք Դիմող Աննա Երեմյանը Կանոնագրքի իմաստով հանդիսացել է Փաստաբանի նախկին վստահորդը,
2. արդյո՞ք Փաստաբանը հետագայում իրավաբանական օգնություն է ցույց տվել այլ՝ նոր վստահորդների,
3. արդյո՞ք Դիմողի և Փաստաբանի հետագա վստահորդների շահերը հակասել են միմյանց,
4. արդյո՞ք առկա է եղել Դիմողի գրավոր համաձայնությունը՝ նույն գործով իր շահերին հակադիր անձանց Փաստաբանի կողմից ներկայացնելու վերաբերյալ:

Անդրադառնալով առաջին հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն կարգապահական գործով հաստատված է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը քրեակատարողական հիմնարկում տեսակցել է Դիմող Աննա Երեմյանին: Նշված հանգամանքը հաստատվում է ոչ միայն Դիմողի բացատրությամբ, այլ նաև Փաստաբանի 02.04.2026թ. բացատրությամբ, որով վերջինս ընդունել է ՔԿՀ-ում Դիմողի հետ տեսակցության փաստը:

Փաստաբանը իր բացատրությամբ հայտնել է նաև, որ հանդիպման ընթացքում Դիմողը իրեն հայտնել է, որ մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման մեջ, իսկ գործով տուժող է հանդիսանում Դավիթ Արզումանյանը: Փաստաբանը նաև նշել է, որ նշված հանգամանքների մասին տեղեկանալով և ճանաչելով Դավիթ Արզումանյանին՝ որոշել է չստանձնել Աննա Երեմյանի պաշտպանությունը:

Հանձնաժողովը կարևոր է համարում ընդգծել, որ Փաստաբանի հենց այս բացատրությունը հաստատում է, որ ՔԿՀ-ում տեղի ունեցած հանդիպումը պատահական կամ կենցաղային շփում չի եղել: Եթե Փաստաբանը հանդիպումից հետո որոշում է կայացրել չստանձնել Դիմողի պաշտպանությունը, ապա ակնհայտ է, որ հանդիպման առարկան վերաբերել է Դիմողի նկատմամբ իրականացվող քրեական վարույթին և նրա հնարավոր պաշտպանությունը ստանձնելու հարցին: Հետևաբար նշված հաղորդակցությունն իր բնույթով եղել է Դիմողի կողմից իրավաբանական օգնություն ստանալու նպատակով Փաստաբանի հետ ունեցած մասնագիտական հաղորդակցություն:

Հանձնաժողովը կարևոր է համարում նաև այն, որ ՔԿՀ-ում կալանավորված անձի հետ փաստաբանի տեսակցությունը, իր իրավական բնույթով, իրականացվում է ոչ թե սովորական անձնական տեսակցության կարգով, այլ փաստաբանի մասնագիտական կարգավիճակից բխող հիմքով:

Կանոնագրքի 1.4 կետի համաձայն՝ վստահորդ է հանդիսանում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը դիմել է փաստաբանի օգնությանը: Նշված ձևակերպումից հետևում է, որ վստահորդի կարգավիճակի առաջացման համար վճռորոշ է անձի կողմից փաստաբանի օգնությանը դիմելու հանգամանքը, այլ ոչ թե միայն գրավոր պայմանագրի կնքման, լիազորագրի տրամադրման կամ դատավարական կարգավիճակով ներգրավվելու փաստը:

Սույն գործով Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Դիմողը դիմել է Փաստաբանի օգնությանը՝ իր նկատմամբ քննվող քրեական գործի և հնարավոր պաշտպանության հարցով: Այդ հանգամանքը հաստատվում է ՔԿՀ-ում տեղի ունեցած տեսակցության փաստով, հանդիպման առարկայով, ինչպես նաև Փաստաբանի սեփական բացատրությամբ, ըստ որի՝ հանդիպումից հետո նա գնահատել է Դիմողի պաշտպանությունը ստանձնելու հարցը և որոշել այն չստանձնել: Հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Դիմող Աննա Երեմյանը նշված իրավահարաբերության շրջանակներում Կանոնագրքի իմաստով ձեռք է բերել Փաստաբանի վստահորդի կարգավիճակ: Այն հանգամանքը, որ հետագայում Փաստաբանի և Դիմողի միջև գրավոր պայմանագիր չի կնքվել կամ Փաստաբանը քրեական վարույթում չի ներգրավվել որպես Դիմողի պաշտպան, չի վերացնում արդեն իսկ առաջացած վստահորդի իրավական նշանակությունը Կանոնագրքի 3.2.2 ենթակետի կիրառման նպատակով:

Հանձնաժողովը միաժամանակ արձանագրում է, որ սույն եզրահանգումը չի հիմնվում Դիմողի այն պնդումների վրա, որոնք գործի նյութերով բավարար չափով չեն հաստատվել, մասնավորապես՝ Փաստաբանի կողմից երկու անգամ ՔԿՀ այցելելու, քրեական վարույթի բոլոր նյութերն իր մոտ ունենալու կամ Դիմողի պաշտպան ձևակերպված լինելու վերաբերյալ պնդումների վրա: Հանձնաժողովի եզրահանգման համար բավարար են գործով հաստատված այն փաստերը, որ Փաստաբանը ՔԿՀ-ում տեսակցել է Դիմողին, տեսակցությունը վերաբերել է Դիմողի նկատմամբ քննվող քրեական գործին և հնարավոր պաշտպանությանը, իսկ Փաստաբանը հետագայում նույն քրեական գործով ներկայացրել է Դիմողի շահերին հակադիր անձանց:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն կարգապահական գործով հաստատված է, որ Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը ՔԿՀ-ում Դիմող Աննա Երեմյանի հետ տեսակցելուց հետո թիվ ԵԴ1/0787/01/24 քրեական գործով ստանձնել է Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հետևաբար Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը Դիմողի հետ նույն քրեական գործի կապակցությամբ մասնագիտական հաղորդակցություն ունենալուց հետո նույն քրեական գործով իրավաբանական օգնություն է ցույց տվել այլ անձանց:

Անդրադառնալով երրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ ԵԴ1/0787/01/24 քրեական գործի շրջանակներում Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի շահերը հակասել են Դիմող Աննա Երեմյանի շահերին:

Նշված հանգամանքների պայմաններում Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Դիմողի և Փաստաբանի նոր վստահորդների շահերը նույն քրեական գործի շրջանակներում հակասել են միմյանց: Սույն դեպքում շահերի հակասությունը կրել է ոչ թե վերացական կամ ենթադրյալ բնույթ, այլ բխել է գործով ներգրավված անձանց դատավարական կարգավիճակներից և նույն քրեական գործի շրջանակներում նրանց հետապնդած իրավական շահերի հակադրությունից:

Անդրադառնալով չորրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետով և Կանոնագրքի 3.2.2 ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը շահերի հակասության պայմաններում իրավաբանական օգնություն ցույց տալու թույլատրելիության պարտադիր պայման է: Այսինքն՝ եթե փաստաբանը պետք է ներկայացնի նոր վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն նախկին վստահորդի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Սույն կարգապահական գործի նյութերով չի հաստատվել, որ Դիմող Աննա Երեմյանը գրավոր համաձայնություն է տվել փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին՝ նույն քրեական գործով իր շահերին հակադիր անձանց՝ Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի շահերը ներկայացնելու համար: Հետևաբար Օրենքով և Կանոնագրքով նախատեսված բացառությունը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Հանձնաժողովը հարկ է համարում նաև անդրադառնալ թիվ ԵԴ1/0787/01/24 քրեական գործով կայացված դատական ակտերին: Գործի նյութերից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 29.12.2025թ. որոշմամբ բավարարվել է պաշտպան Արթուր Քալաշյանի միջնորդությունը և փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը հեռացվել է նշված քրեական գործով վարույթից՝ որպես տուժող Դավիթ Արզումանյանի լիազոր ներկայացուցիչ: Հետագայում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 09.03.2026թ. որոշմամբ նշված դատական ակտը բեկանվել է, և պաշտպան Արթուր Քալաշյանի՝ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին վարույթից հեռացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նշված որոշումը սույն կարգապահական գործի ելքը կանխորոշող նշանակություն չունի: Քրեական վարույթում դատարանը քննարկել է տուժողի ներկայացուցչին տվյալ քրեական վարույթից հեռացնելու դատավարական հարցը, մինչդեռ Հանձնաժողովը սույն վարույթում գնահատում է փաստաբանի մասնագիտական վարքագիծը՝ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների տեսանկյունից:

Այլ կերպ ասած՝ քրեական դատարանի կողմից ներկայացուցչին վարույթից չհեռացնելու հանգամանքը ինքնին չի նշանակում, որ փաստաբանի վարքագիծը չի կարող գնահատվել կարգապահական պատասխանատվության չափանիշներով: Քրեական վարույթում ներկայացուցչի մասնակցության թույլատրելիության հարցը և փաստաբանի կարգապահական վարքագծի իրավաչափության հարցը նույնական չեն, ունեն տարբեր առարկա, տարբեր իրավական չափանիշներ և տարբեր իրավական հետևանքներ:

Հանձնաժողովը միաժամանակ հաշվի է առնում Վերաքննիչ դատարանի որոշման այն տրամաբանությունը, որ միայն փաստաբանի և մեղադրյալի միջև նախկինում տեղի ունեցած

շփման փաստը բավարար չէ դատավարական մասնակցությունը սահմանափակելու համար: Սակայն սույն կարգապահական վարույթում Հանձնաժողովի գնահատման առարկան միայն շփման փաստը չէ: Գնահատման առարկա են այն հանգամանքները, որ Փաստաբանը ՔԿՀ-ում հանդիպել է Դիմողին նույն քրեական գործով վերջինիս հնարավոր պաշտպանությունը ստանձնելու կապակցությամբ, այդ հանդիպումից հետո որոշել է չստանձնել Դիմողի պաշտպանությունը՝ գործով տուժող Դավիթ Արզումանյանին ճանաչելու պատճառով, այնուհետև նույն քրեական գործով ստանձնել է Դիմողի շահերին հակադիր անձանց ներկայացուցչությունը՝ առանց Դիմողի գրավոր համաձայնության:

Հանձնաժողովը հատկապես կարևոր է համարում այն հանգամանքը, որ Փաստաբանի համար Դիմողի և Դավիթ Արզումանյանի շահերի հակադրվածությունը հայտնի է եղել հենց ՔԿՀ-ում տեղի ունեցած հանդիպման ժամանակ: Փաստաբանը իր բացատրությամբ նշել է, որ հանդիպման ընթացքում տեղեկացել է, որ Դիմողը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման մեջ, իսկ գործով տուժող է Դավիթ Արզումանյանը, և այդ հանգամանքը հաշվի առնելով որոշել է չստանձնել Դիմողի պաշտպանությունը: Հետևաբար հետագայում նույն քրեական գործով Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի շահերը ներկայացնելու պահին Փաստաբանը չէր կարող չգիտակցել, որ ստանձնում է նախկինում իր օգնությանը դիմած անձի շահերին հակադիր անձանց ներկայացուցչությունը:

Հանձնաժողովը հատուկ արձանագրում է, որ սույն կարգապահական վարույթում Փաստաբանը պատասխանատվության չի ենթարկվում փաստաբանական գաղտնիքի բացահայտման, օգտագործման կամ վստահված գաղտնիքի բացահայտման վտանգի համար: Սույն վարույթը հարուցվել և քննվում է Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի շրջանակում՝ շահերի հակասության կանոնի խախտման հիմքով: Հետևաբար Հանձնաժողովի եզրահանգումը հիմնված է նախկին և նոր վստահորդների շահերի հակասության և նախկին վստահորդի գրավոր համաձայնության բացակայության վրա:

Վերոնշյալ հարցադրումներին տրված պատասխանների համակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի կիրառման համար անհրաժեշտ բոլոր վավերապայմանները: Մասնավորապես՝

Աննա Երեմյանը Կանոնագրքի իմաստով հանդիսացել է Փաստաբանի նախկին վստահորդը,

Փաստաբանը հետագայում նույն քրեական գործով իրավաբանական օգնություն է ցույց տվել Դիմողի շահերին հակադիր անձանց՝ Դավիթ Արզումանյանին և Սոֆյա Գևորգյանին,

Դիմողի և Փաստաբանի նոր վստահորդների շահերը հակասել են միմյանց,

Դիմողի գրավոր համաձայնությունը իր շահերին հակադիր անձանց ներկայացնելու վերաբերյալ գործի նյութերով չի հաստատվել:

Հանձնաժողովը հիշեցնում է, որ Օրենքով նախատեսված շահերի բախման արգելքը կոչված է երաշխավորելու փաստաբանի անկախությունը, բարեխղճությունը և վստահորդի շահերով առաջնորդվելու պարտականությունը: Փաստաբանը, որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, պարտավոր է ոչ միայն պատշաճ կատարել ստանձնած հանձնարարությունը, այլև զերծ մնալ այնպիսի հետագա հանձնարարություններից, որոնք

նույն գործով հակադրվում են իր նախկին վստահորդի շահերին՝ առանց վերջինիս գրավոր համաձայնության:

Նման մոտեցումը բխում է նաև փաստաբանության սահմանադրական-իրավական կարգավիճակից, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2598/02/11 քաղաքացիական գործով 25.12.2012թ. որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումից, ըստ որի.

«2. Իրավաբանական օգնության արգելքը

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը, փաստաբանի համար նախատեսելով իրավաբանական օգնություն ցույց տալու համար համապատասխան երաշխիքներ, սահմանելով նրա հիմնական իրավունքները և պարտականությունները, նախատեսել է վերջինիս կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու և իր իրավունքների իրականացման որոշակի առանձնահատկություններ և սահմանափակումներ, որոնք ուղղված են Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված փաստաբանության սկզբունքների, մասնավորապես անկախության և օրինապահության սկզբունքների ապահովմանը:

Այդ նպատակով Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված է, որ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ

1) առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև.

2) տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, թարգմանիչ կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը.

3) ազգակցական, անձնական կամ կախյալ հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցել կամ մասնակցում է տվյալ անձի գործի քննությանը.

4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

<u>Վերոնշյալ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը</u>: *Այս սկզբունքն ուղղակիորեն ամրագրված է նաև Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների 14-րդ կետում, որի համաձայն՝ իրենց հաճախորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության շահերը պահպանելիս իրավաբանները պետք է նպաստեն ազգային և միջազգային իրավունքներով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը և բոլոր պարագաներում գործեն անկախ ու բարեխղճորեն՝ օրենքին և ընդունված նորմերին ու իրավաբանի մասնագիտական բարոյականությանը համապատասխան:»*:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ 1263 որոշմամբ սահմանել է, որ *փաստաբանության խնդիրն է անձին որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:*

Ըստ այդմ, փաստաբանը հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն իրականացնող և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ փաստաբանությունը ներկայացնող անձ, ունի առանձնահատուկ սոցիալ-իրավական կարգավիճակ, որը չի սկսվում և ավարտվում միայն վստահորդի հանձնարարության պատշաճ կատարմամբ, այլ ընդգրկում է փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունների որոշակի ամբողջություն: Մասնավորապես, փաստաբանը պետք է մշտապես գործի իր վստահորդի շահերին համապատասխան, և վստահորդի շահերը դասի իր շահերից վեր, անգամ այն դեպքերում, **երբ նա արդեն նախկին վստահորդ է:**

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներ:

7. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>.

Օրենքի 39.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը և փաստաբանին բնութագրող այլ հանգամանքներ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է

այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Սույն գործով Հանձնաժողովը հաշվի է առնում, որ Փաստաբանի կողմից թույլ տրված խախտումը վերաբերում է փաստաբանական գործունեության կարևորագույն երաշխիքներից մեկին՝ շահերի հակասության պայմաններում իրավաբանական օգնություն ցույց տալու արգելքին: Նշված կանոնի նպատակը փաստաբանի անկախությունը, բարեխղճությունը և վստահորդի շահերի առաջնահերթ պաշտպանությունն ապահովելն է, ինչպես նաև նախկին և ներկա վստահորդների շահերի հակադրության պայմաններում փաստաբանի մասնագիտական վարքագծի նկատմամբ ողջամիտ վստահության պահպանումը:

Տվյալ դեպքում Փաստաբանը, նախկինում Դիմող Աննա Երեմյանի հետ նույն քրեական գործի կապակցությամբ մասնագիտական հաղորդակցություն ունենալուց հետո, առանց Դիմողի գրավոր համաձայնության, նույն քրեական գործով ստանձնել է վերջինիս շահերին հակադիր անձանց՝ Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի շահերի պաշտպանությունը: Այս հանգամանքը վկայում է, որ խախտումը չի կրել զուտ ձևական բնույթ, քանի որ այն առնչվել է նույն քրեական գործի շրջանակներում նախկին և նոր վստահորդների շահերի իրական հակադրմանը:

Մեղքի աստիճանը

Հանձնաժողովը Փաստաբանի մեղքի աստիճանը գնահատելիս հաշվի է առնում, որ վերջինս, պարտավոր էր մինչև նոր հանձնարարության ընդունումը գնահատել շահերի հակասության առկայությունը և դրա իրավական հետևանքները:

Փաստաբանը, իր իսկ բացատրությամբ, ՔԿՀ-ում Դիմողի հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում տեղեկացել է, որ Դիմողին վերաբերող քրեական գործով տուժող է հանդիսանում Դավիթ Արզումանյանը: Ավելին, Փաստաբանը նշել է, որ Դավիթ

Արզումանյանին ճանաչելու հանգամանքը հաշվի առնելով՝ որոշել է չստանձնել Դիմողի պաշտպանությունը: Հետևաբար Փաստաբանի համար Դիմողի և Դավիթ Արզումանյանի շահերի հակադրությունը հայտնի է եղել դեռևս մինչև նոր հանձնարարությունը ստանձնելը:

Հանձնաժողովը վերաբերելի է համարում նաև կարգապահական վարույթի ընթացքում հետազոտված դատական նիստի ձայնագրության կրիչի բովանդակությունը, ըստ որի՝ փաստաբան Դավիթ Թովմասյանը դատական նիստի ընթացքում հայտնել է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևն իրեն հայտնել է, որ հետագայում կարող է բարձրացվել Կոչուբաևին վարույթից հեռացնելու կամ նրա մասնակցությունը վիճարկելու հարցը:

Այսպիսով, Փաստաբանը փաստացի գիտակցել է, որ իր հետագա մասնակցությունը նույն քրեական գործով Դիմողի շահերին հակադիր անձանց ներկայացուցչի կարգավիճակով կարող է վիճարկվել հենց շահերի հակասության հիմքով: Այդուհանդերձ, Փաստաբանը, առանց Դիմողի գրավոր համաձայնության, ստանձնել է Դավիթ Արզումանյանի և Սոֆյա Գևորգյանի շահերի ներկայացուցչությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը գիտակցել է շահերի հակասության առկայությունը, սակայն շարունակել է նույն քրեական գործով ներկայացնել Դիմողի շահերին հակադիր անձանց: Ուստի Փաստաբանի վարքագիծը չի կարող գնահատվել որպես կոպիտ անփութությամբ կատարված խախտում, այլ հանդիսանում է Օրենքի և Կանոնագրքի պահանջների դիտավորությամբ խախտում:

Կարգապահական խախտման հեգևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով գործել է ի վնաս իր նախկին վստահորդ՝ Դիմողի, ում շահերը պետք է դասեր իր շահերից վեր:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև, որ շահերի հակասության կանոնի խախտումն ինքնին էական է, քանի որ այն կարող է խաթարել նախկին վստահորդի վստահությունը փաստաբանական ինստիտուտի նկատմամբ և կասկածի տակ դնել փաստաբանի կողմից մասնագիտական անկախության և բարեխղճության սկզբունքների պահպանումը:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը նաև հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները: Գործի նյութերում առկա տեղեկանքի համաձայն՝ 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում Փաստաբանի նկատմամբ կիրառվել են երեք կարգապահական տույժեր, որոնց հիմնական տույժերը մարված են, իսկ լրացուցիչ տույժերից երկուսը մարված չեն:

Հանձնաժողովը արձանագրում է, որ մարված հիմնական տույժերի իրավական հետևանքները չի տարածում Ալեքսանդր Կոչուբաևի՝ սույն դեպքի նկատմամբ: Միաժամանակ լրացուցիչ տույժերի չմարված լինելու հանգամանքը, հաշվի է առնվում տույժի տեսակը որոշելիս:

Վերոգրյալ հանգամանքների համակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ ամենամեղմ տույժի՝ «նկատողություն» կիրառումը բավարար չի լինի կարգապահական պատասխանատվության նպատակներին հասնելու համար, քանի որ թույլ տրված խախտումը վերաբերում է շահերի հակասության արգելքի պահանջին և

կատարվել է նույն քրեական գործով նախկին և նոր վստահորդների շահերի հակադրման պայմաններում:

Միաժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ առավել խիստ տույժերի, այդ թվում՝ տուգանքի կամ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման կիրառումը տվյալ դեպքում համաչափ չի լինի, քանի որ գործով չի հաստատվել այնպիսի ծանր հանգամանքներ, որը կպահանջեր առավել խիստ կարգապահական արձագանք:

Ուստի, հաշվի առնելով խախտման բնույթը, Փաստաբանի մեղքի աստիճանը, խախտման հետևանքները, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, Հանձնաժողովը համաչափ է համարում Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի (արտոնագիր՝ թիվ 2606) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «Խիստ նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26003-2-Ա
06 մայիսի 2026թ.
ք.Երևան